

ԲԱԺԱՎՈՐ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուշկարիոյ համար
 Տարեկան 12 ձր.
 Վեցս 6 »
 Արասահմանի հա-
 մար Տարեկան 15 »
 Վեցս 8 »
 Անկրիկայի համար
 Տարեկան 3 ձր.
 Վեցս 1.50 »
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐԵԼԻ
 Ծանուցման տղրատու
 քիւնտեսին համար 40-
 հ. իսկ վերջին երեսի
 մար 20 սանիթի և երեքին
 աւելի անգամներու համար
 20 ՍՊՈՒՆՆԵՐ ԿՐՈՂԱՅՈՒՆ

ՇԱՐԱԹ

R. P. Kalemcarian, Me-hithbaristengasse W. 4
 (Autriche)
 VIENNE

Կանակ եւ դրամ գրեց
 ինքնագրութեան հաս.
 —
 Редакция навѣстникъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)
 —
 Կրօնիւնք եւ չին տուիւ
 Արասահմանի ձեռքի
 (20 ՍԱՆԻԹՄ)
 Պուշկարիոյ համար ձեռքի
 = 15 ՍԱՆԻԹՄ =

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԵՐ ՀՐԾՏԱՐԱՐԱՆՈՒԹ ԶՈՐԵԲՇԱՔՈՒԹ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՇԱՐՃՈՒՄԻ ԵՈՐ ԲԱԺԱՎՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ՆԱՆԻՍԻՒ ՎՃԱՐԻ

ՄԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՅԱՐ- ԳԱՆՔ

Պետրոս Սէրէմճեանը և իր քաջ
 ընկերները իրենց թանկագին
 կեանքերը զոհեցին բանտարկ-
 եալիներին ազատելու համար :
 Պետոյի և ընկերների ա-
 նունը յաւիտեան պէս հայ յեղա-
 փոխական բանտարկեալներին հետ
 կապելու համար, մենք որոշում
 ենք նախաձեռնարկ լինել նրա
 յեղափոխական ոգով թարգմա-
 նութիւնները, կենսագրական
 տեղեկութիւններով միասին,
 շքեղ գրքով հրատարակել, որից
 գոյացած ամբողջ արգելքը
 պէտք է յատկացվի հայ յեղափո-
 խական բանտարկեալներին օգ-
 նելու համար հիմնովելիք դրա-
 մարկիչին :

Մի շքեղ, և Պետոյի յիշատա-
 կին արժանի գիրք հրատարակե-
 լու համար բաւական գրամ պէտք
 է, որից խմբագրութիւնս բոլոր-
 րովին զուրկ է. ուստի մենք ա-
 ռաջարկում ենք Պետոյին յար-
 գողներին շտապել իրենց մէջ
 հանգանակութիւններ անել այդ
 հրատարակութիւնը շուտով գը-
 լուխ բերելու համար :

Գիրքը լոյս տեսնելուց յետոյ,
 խմբագրութիւնս ծախքերի հա-
 մար մանրամասն հաշիւ կը ներ-
 կայացնի, իսկ ստացված ար-
 գելները կը դնի դաշնակցութեան
 Բալքանեան Յ. Կոմիտէի տրամա-
 գրութեան տակ, միայն այն
 պայմանով որ այդ գրամը բացի
 բանտարկեալներին օգնելուց ու-
 րիչ ոչ մի նպատակի համար չի
 գործադրվի :

Մեր կարծիքով գիրքը շքեղ
 կերպով հրատարակելու համար
 7—800 ֆրանքի կարիքը պէտք է
 շագցվի. Պետոյի և իր ընկեր-
 ներին բազմաթիւ սիրող ո յար-
 գողների համար այդ գումարը
 շատ չնչին բան է :

ՂԱՐԴՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պուքրէշ 10 դեկտ.

Ամեն բանիմաց հայի ծանօթ
 բացայայտ մի իրողութիւն է թէ
 ռուսաւանայ գաղութը անտար-
 բերութեան դիմակին տակ կը ծ-
 կւած այս մի քանի տարիների
 ընթացքում իր ազգային բազմա-
 դիմի պահանջների հանդէպ դը-
 րական, նշանակելի ոչ մի քայլ
 չառնելուց զատ, անզգալիօրէն
 կլանվում է տիրող պայմաննե-
 րից ու այդպէսով ընդմիջում ձու-
 ուելու վտանգի տակ է երեւում :
 Փոխանակ սանձելու մեր վատ
 յակումները մարդավայել կեան-
 քի յառաջխաղաց նշաններ ցոյց
 տալով, մենք շարունակում ենք
 մնալ մի այնպիսի արգահատելի
 վիճակում, որ պատիւ չի բերում
 երբէք մեր ազգային նախանձա-
 խնդրութեան :

Եւ զարմանալին նա է որ օրի-
 նակ էլ չենք ուզում առնել ու-
 րիչներից, երբ աչքի առջեւ
 ունենք մեզ նման միեւնոյն դըժ-
 բաղդ արհաւիրքներից ճողոպ-
 րած գաղթային մի զանգւած ևս
 Ամերիկայում, որը բազմաթիւ
 մեզնից շատ հեռի է իր մայր
 հայրենիքից :

Սակայն նրանք այնտեղ միշտ
 ապրում են ժողովրդի սրտին մօ-
 տիկ, նրա ցաւերով և նրա ան-
 միջական կարիքներին լիթե-
 ւացնում աւուղ ձեռնարկներով
 են զբաղվում : Այն տեղ երկտա-
 սարգութիւնն էլ գիտակից է իր
 ազգային պարտաճանաչութեան,
 այնտեղ աշխատաւոր գասն էլ
 բուռն համակրութեամբ և զոհո-
 զութիւններով է վերաբերվում
 դէպի յեղափոխութիւնը :

Այդ միեւնոյն ոգեւորութիւնը,
 միեւնոյն ջանքերը կրթական
 գործերի նկատմամբ, համայն-
 րին օգտակար դառնալու տենչա-
 ցող երեւոյթներ մենք տեսնում
 ենք Թուրքիայի հայ գաղութի մէջ :
 Այս բոլոր ուրախաւթ ազգա-
 յին ոգու ծաւալումը շեշտող ար-

թուն տրամագրութիւնների հան-
 դէպ ի՞նչ արեց և անում է ուու-
 մանահայ գաղութը :

Սրա պատասխանը կարծեմ
 բացատկան է :

Մենք մի տեսակ անզգացել,
 չենք լսում, կամ չենք կամենում
 իմանալ այն ախուր, բոթաբեր
 լուրերը որ օրը օրին հասնում
 են մեզ և որոնք իրենց եզերնա-
 կան գրութեամբ քարացած մար-
 դու սիրտն են ծակում :

Բայց ոչ, մի քիչ ցաւում ենք և
 վայրկեանական դժնդակ աղղե-
 ցութիւնից յետոյ նորից թաղ-
 ւում ենք խաղամուրթեան աշ-
 խարհում, անճահ վարմունքնե-
 րի մէջ, նրանց մէջ որոնելով
 մեր ցաւի դարմանը :

Սթափուենք ջանանք ամեն պա-
 րագայում մեզ գերծ պահել թու-
 լութեան աւերող ախտից, աշխա-
 տենք որքան ներում են մեր ու-
 միւրը բարձրացնել ազգայնական
 բարոյական մակարդակը, ամեն
 հայ անհատ իր շրջանում, և մի-
 աժամանակ ձեռք կարկառենք
 վաթմանում, արիւնի մէջ լողացող
 արիւնակից եղբայրներին :

Դրանց հետ միասին չը զլա-
 նանք և մեր աշակցութիւնը կը-
 թական գործերի նկատմամբ, ո-
 ռոնց մէջ կրթութեմ է մեր ապա-
 գայ մատաղ սերունդը :

Ինչ հարկ համողիչ փաստերի.
 ահաւասիկ աչքերնիս առջեւ ու-
 նինք բումանահայ եղբայրները
 որոնց դէմ սրտի նողկանքով և
 մի տեսակ ազգային պաղարիւ-
 նութեամբ ենք վերաբերում այն
 պարզ պատճառաւ, որ նրանք
 չեն կարողացել պահել իրենց
 տոհմային յատկութիւնները եւ
 լեզուն ու կուլ են գնացել տիրող
 տարրին : Հաւատացէք որ միեւ-
 նոյն բանը սպասում եւ մեզ
 ապագային : Եթէ շարունակ
 ենք մեր այս ողբերգութիւնը ու
 ձեռնապահ մնանք հանրային
 դժբաղգութիւնների առջեւ :

Աւելորդ չեմ համարում հոս
 յիշել այդ պիսի հանրային
 դժբաղգութիւններից մին՝ կարի-
 նի արկածելոց վիճակը, որի առ-

ջեւ կարծէ կանգք առնել, որից
 պարզապէս ամեն հայ սիրտ
 խորապէս վրդովվում է :

Եւ շատ ուրախ եմք որ ճար-
 ժումի խմբագրութիւնը իր
 անցեալ թւերում մի կտրուկ
 սուաշնորդող յօդաւածով հայու-
 թեան ուշադրութիւնը հրաւիրում
 էր այդ աւերումի շուրջը, որի
 մէջ, շեշտաւած էր մասնաու-
 րապէս Բուլղարահայերի նախա-
 ձեռնութիւնը :

Եւ կրկնակի գովելի պիտի
 գտնենք, երբ այդ բացօդեայ
 մնացածների աղիողորմ ճիշը,
 արձագանք գտնի մեր բոլոր հա-
 յարնակ քաղաքներում ու վեր
 կենան բարեսիրա անձինք հան-
 գանակութեան ձեռնարկելով
 շտապին օգնութեան հասնիլ
 դրանց, գիտեանալով որ մի մեծ
 հայրենան էր պարտականութիւն
 կատարած պիտի լինինք : Եւ
 յուսալից եմք որ հասարակու-
 թիւնը ևս չի պիտի զլանայ իր
 աշակցութիւնը այդ բարի ձեռ-
 նարկին :

Այժմ խօսքս մասնաւորում եմ
 տեղիս ազգային կեանքի ու ըն-
 թերցարանի մասին, մի փոքր
 գաղափար տալու ճարճումի
 ազնիւ ընթերցողներին :

Համարեա մեր բոլոր կենսա-
 կան գործերում անհասկացողու-
 թիւնները իրանց անհաճոյ հե-
 տեւողականութեամբ մեծ գեր-
 են խաղում, որի հետեւանքը լի-
 նում է յաճախ անյաշնողութիւն,
 գործերի թուլացում :

Եթէ չեմ սխալում, պիտի ա-
 սել որ միեւնոյն ցաւալի նկարը
 արտայայտում է տեղիս ընթեր-
 ցարանի նկատմամբ :

Մի ընթերցարան ունինք,
 գաղթական ազգայինների ջան-
 քով բացւած, որը բազմաանում է
 երկու ընթերցասօրահից և ունի
 բաւական թւով հայ թերթեր մի
 փոքր գրադարանով :

Լաւ. ընթերցարանը հիմնել
 ենք, ամէն ինչ կանոնաւորէ,
 չի օրերին երեկոյեան ժամը
 5ից մինչեւ 11 իսկ կիրակի ա-
 ռաւօտեան 10ից մինչեւ գիշեր-
 ւայ ինը բացէ :

Սակայն դժբաղդութիւնը հէնց նրա մէջն է, որ այնքան մօտիկ լինելով հանդերձ, հասարակութիւնը շատ պաղօրէնէ վերաբերում: Պարզապէս պէտք է ասել որ չի ուզում իր տաճ գրամի օգտուիլ, և որ այժմ աւելորդ եմ համարում ծանրանալ ընթերցարանի օգտակարութեանը վրա, այն էլ մեզ նման ցիրուցան եղած ժողովրդի համար:

Մի կողմից հակասեալ խռովութիւններն էլ անպակաս են. գլխաւորաբար այդ է պատճառը շրջախառնութեան, խաղաղութիւնն էլ վարակելէ ամենքին, տնայէս ոք ամէն ինչ իրար հետ յարմարեւել:

Զը մոռանամ ասել որ, դեռ ինը ամիս չը բոլորած, երեք վարչական մարմինների բովից է անցնում ընթերցարանի զեմ նախկին վարիչ մարմնի գէմ դժգոհութիւններ բարձրանալուն նա իր հրաժարականը տուց, որի մէջ իրամամբ ամէն դեհաւտանքի արժանի էր Տ. Ղազարոս Ավճեանը. իր գիտակից հասկացողութեամբ, առողջ սկզբունքով և մեծ ժողովրդակաւնութիւնով:

Արդէն մեր նախորդ նամակում յայտնել էինք որ նախկին վարչութեան հրաժարումից յետոյ, կազմեց առժամանակեայ կարգադիր մասնախումբ, որը շանաց բառնալ դժգոհութիւնները մէջտեղից, սակայն իզուր. միշտ գոյութիւն ունին և չը գիտեմ ինչերից առաջնորդած:

Այստեղ մասնաւոր յարգանքի արժանի է նաեւ պ. Արմենակ Բարակեանի անխնայ ջանքերը և զօհողութիւնները: Այս համակրելի ու գաղափարական երիտասարդը ոչ միայն ընթերցարանի ալ և ամէն ազգային օգտակար գործերի առնմիջտ պատրաստակամութիւն է ցոյց տալիս ու աշխատում:

Կարգադիր մասնախումբը մի անգամ ընդ միշտ խոչնդոտները վերացնելու նպատակաւ նախկին վարչութեան անդամներէ ու իրենց անուններից դուրս, ընթերցարանի անդամներին ներկայացրեց 30 հոգուց բաղկացած ընտրելիների մի ցանկ, որոնցից պիտի ընտրէր նորընտիր վարչական մի մարմին: Եւ այդպէս էլ եղաւ:

Ամսիս Թին գումարեց քուէարկութեան ժողով, ուր բաւական թեր ու գէմ կարծիքներ փոխանակելուց յետոյ, առ այժմ առաւելութեամբ ընտրեցին հետեւեալ անձինք՝

- Յ. Պիպեան
- Յ. Սրապեան
- Մ. Քահանայապետեան
- Ս. Քէրթոյեան
- Գ. Իսկէնտէրեան

Երկու խօսք էլ նորակազմ վարչութեան: Յաջողութիւն և անկուն կամք ենք մաղթում նորընտիր վարչութեան, որ անխարօքէն աշխատին անխախտ հիմերի վրա պահել ընթերցարանը, ամէն բանից առաջ՝ ժողովուրդը ընթերցարանը մզեն:

ԽՈՍ

Ֆիլիպէ 10 դեկտ.

Գեկտ. 2, կիրակի օր, հոգեհանգիստ կատարեցաւ Էտիրենէի մէջ կախող և անոնց կուրիին մէջ Իյնող հերոսներու յիշատակին, պուլկարական մայրեկեղեցիին մէջ:

Պուլկար և հայ ժողովուրդին զգացած վիշաք այն քաջերուն կորուստին առթիւ խիստ մեծ էր: Հազարաւոր մարգիկ—հայ և պուլկար—վուծացած էին եկեղեցի:

Կախող և մեռնող հերոսներուն 7 հատին պատկերները, սեւերով շրջապատուած, բազմութեան առջեւէն առաջնորդեցաւ եկեղեցի, որոնց ի յարգանք նուիրուած էին պատկեր Մակկիօմիտէի, հին Հնչակեան մասնաճիւղին և Դանակեղութեան ֆիլիպէի կօմիտէի կողմէ: Բազմութեան կրկերակցէին նաև պուլկարական մէկ—երկու ընկերութիւնները իրենց դրօշակներով:

Որ հայ շարասուեց Պետօր, Թաթուլի, Օննիշի պատկերներ, ուն խրոխտ նայուածքին հանդիպած տեսնելով իր նայուածքը, որոնց գէմբը, որ կողմէն ալ գիտեա. անվեհերութիւն, քաջութիւն կը բուրէ:

Հոգեհանգստի արարողութեան ետք, եկեղեցիին մէջ, Պ. Բովէլ ազգու բանախօսութիւնով մը քաջերու կենսագրականը բարա յուզուած, յետոյ առ հասարակ բազմութիւնը երգերով պատկերներով ու դրօշակներով առաջնորդեցաւ գէպի գէպի մեծ պողոտան:

Հասարակաց պարաէզին առջեւ պ. Անպրէաս Եակոբեան երկար ու կուռ բանախօսութիւն մը բարա պուլկարեղէն լեզուա, պարզեց Պետօրի յեղափոխական գործունէութիւնը, վեր հանեց Օննիկներու Թաթուլներու գործունէութիւնը, չի մոռնալով արժանի տեղը ցոյց տալ արիւնխում Համիսներու, Զարերու և բոլոր բանակալութիւններու:

Ժողովուրդը սաստիկ յուզուած ու կատաղած էր: Անվերջ հոտուներ պողոտային Սուլթանին և բանութիւններու հասցէին, որոնք կրկնուէցան աւելի զօրաւոր թափով թիւրք հիպատասարանին առջեւ: Համակրական ուսուանք տեղի ունեցան Ֆրանսական հիպատասարանին և սպաններու գլխա-

պին առջեւ, որ Պետօրի պէս քաջ մարտիկներ տուած է իր շարքերէն յեղափոխութեան:

Երգուեցաւ հայերէն երգեր ալ որոնց մէջէն պէտք է յիշել անմոռանալի Պետօրի ֆիլիպէի երիտասարդութեան ձգած նուէրը— «Լօ», «Լօ», «Լօ», Սիփանա սէգ սարի վրայ...:

Բազմութիւնը ամբողջ երկու ժամ փողոցները պտտելէն վերջը ցրուեցաւ:

ՀՐԱՆԴ-ՎԻՐԱՅԻՐ

ՀՈՒՐ ԵԿԻ ԱՐԿԱՆԵԼ ՅՆՐԿԻՐ

Թղթակցի պարտականութիւնս կատարելու համար կուզում անդրոյ ազգայնոց արգահատելի կացութիւնը հարգելով ճշարտեմ իմ ջոցաւ յարգելի ընթերցողաց: Գրեթէ տարի մը ի վեր կուսակցական վէճերը բոտ բաւականի խաղաղած էր պատ. Թաղ. խորհրդոյ լուրջ գործունէութեան շնորհիւ, որ թէ նախորդ թաղականութեան 6-700 ֆրանքի չափ պարտքը վճարելով հանգրձ եկեղեցիին պարտ ու տարտակամածը նորագեց, արա մը գնեց և 600 ֆրանքի մօտ գումար մ'ալ աւելցուցաւ պայան օգոստոսի մէջ անակնկալս մասնաւոր կարգադրութեան մը համաձայն տեղս ժամանեց Պուլկարիոյ նշանաւ հովիւ Պաղճեան վարդապետը և ուղղակի ժամագործ Պողոս աղա Թըղթեանի տունը իջեանց որ գրեթէ չուրջ 8 ամիս առաջ գոյն հրապարակաւ ծողովէն արտաքսած էր) ու սկսաւ իր մանուածապատ տնորութեանը ձեռնարկել. նախ ընտրողական ժողով մը գումարեց այնպիսի անհատներով որ տարի մը առաջ «Անաթեմա» կտրողացած էր. . . Ժողովուրդը մասնաւոր հանրագրութեամբ և հետագրաւ բողոքեց Ազգ. պատրիարքարան զեղծմանց հանդէպ. սակայն եկած հրամանները բարձի թողի ընելով ընտրութեան ձեռնարկեց. Աստուած ընտրութիւն ընէ չեմ գիտեր ի՞նչ օրինօք, գուցէ Պաղճեան արդէն նախորդ հոգաբարձութեան Յ անդամները իրենց գործը բարա խօստանալով անոնց թաղ. ընտրել, եթէ նոքա իր քրոջ թոռ Գերովթէ Ոսկերիչեան նոր շրջանին Ազգ. վարժարանին մէջ ուսուցիչ կարգեն:

Օգոստոսի վերջերը ֆիլիպէի խրեթթօրութեան զի տեղականը ջնջուած և ֆիլիպէի փոխանցուած է) ըստ սովորութեան պաշտօնագէս կը պահանջուի նոր բունութիւք ուսուցչի վկայաթուղթերը. հոգաբարձութեան զիւանը կը հարկադրուի իրենց զաստու. Պ. վաղարշ Գոգոնեանի, իսկ թաղականացեալ հոգաբարձութեան անդամները Գերովթէ Ոսկերիչեանի վկայագրերը կը զրկեն, որոց և ոչ մին կընդունուի. կը հրամայուի փակել վարժարանը մինչեւ վկայեալ ուսուցչի մը գտնալը: Դեռ այս հրամանը չեկած սեպտ. Զին կիրակի օր Պաղճեան հոգաբարձութիւնը ժողովուրդով կուղէ շանկալ թէ ի՞նչ պիտի ընեն, քանի որ արձակուրդը լրացած է, իրեն կը պատասխանուի թէ կրկնական տեսչի գրուած է և հրամանի կապտուռի որն որ օրինա-

կան գտնելով կը հաւանի, բայց հետեւեալ օրը իրեն հլու գործիք դարձած հոգաբարձութեան Յ անդամները և քանի մը ալ տնուղղայնոր հոտէն ձգած, Պաղճեան կը կտրեց զպրոցին փականքները և իր քրոջ թոռ Գերովթէ Ոսկերիչեան 7-8 աշակերտներով կը բազմեցնէ ուսուցչական աթոռին վրայ որ տարիէ մը ի վեր ախր կը քաշէր: Հոգաբարձութեան զիւանը իրաց վիճակը անգիտեց կրթական տեսչին. Եկած հրամանին համաձայն կրկին գոցուեցաւ, բայց կրկին անգամ Պաղճեանի թիւղղորութեամբ կոտորուեցաւ. ի հօրիկ ստիպեալ հոգաբարձութիւնը երորդ անգամ անգիտեց կրթական տեսչին, որուն հրամանին համաձայն պ. Ոսկերիչեան կը կանչուի ոստիկանատուն. սր ստորագրութեան ներքեւ խօսք կուտայ այլ ևս ոտք չը կրիել Ազգ. վարժարան. ճարահատեալ մեր լեզուաբան բրօքլսօրը չունչը կանէ Սօֆիա վկայագրի մը ճարելու տնջօք, բայց զժողովարար հոն ալ ծախողներ չը գտնալուն ձեռոտնայն ետ կը դառնայ ևս կամաց կամաց քննելով վերստին կը տեղուորուի. կրթական տեսչը տեսնելով որ հրամանները բարձի թողի կըլլան կրթական բարձր. նախարարութեան գիմած է ուրիկ եկած խիստ հրամանի համաձայն տեղոյս «բոխգալը» անձամբ երթալով զպրոց, դուրս կը վանէ Ոսկերիչեանը և կը փակէ վարժարանը: Հոյնմեր ԶՅին նոր հոգաբարձութեան վաւերացումը պաշտօնագէս կը հաղորդուի որոնք կը հարկադրուին միանգամ ընդ միշտ վերջ տալու այս վատթար կացութեան (որ երեք ամիսէ ի վեր 20-25 տղաքները փազոցները կը զեղերին շնորհիւ Պաղճեան վարդապետի) կը զիմեն նախորդ ուսուցչին որ հաճի ի սէր Ազգ. մանկատան գոնէ այս տարի ալ ստանձնէ ուսուցչական պողոտան. նա կը հաւանի քնակաւարար իրեն անձնական ու տնուարական գործերէն վնասուելով. և այսպէսով կը զիմեն կրթական տեսչին բրուն վկայագրերը տեսնելուն անմիջապէս կը հաղորդէ կրթական բարձր. նախարարութեան. նորին բարձրութիւնը կը հրամայէ անմիջապէս բանալ վարժարանը և յանձնել նախկին ուսուցչի, այդ հրամանի համաձայն գրողագրովը կը կանչէ տեղոյս համալուար Հիւրմիւլեան Գէորգ քահանան և կը պահանջէ զպրոցին բանալին (որ անոր յանձնել է իրբու արժանաւայայ կղեր) քահանան երբ կը լսէ իրեն ինկարկած պ. Գերովթէի վերջնականագէս անկուրը բախողական խոստանողական պատասխաններ կուտայ թէ ինքն ալ բանալին յանձնել է նոր թաղ. տեսնապետ Սալիկ Մանաեանի (որ քանի մը օրէ ի վեր Սօֆիա գալած էր մեր լեզուաբան բրօքլսօրի պատասխաններ լրացուած) հետեւեալ օրը սեպտ. 28ին սուսուտեան հոգաբարձութեանը կը լսէ որ զպրոցը մերկացրէ է, զրանգան, աթոռ զպրոցական առարկաներ, պատուհանի շրջանակներ, դուռները և մինչեւ իսկ կղմիւտները զիջելով զոգոցներ են, իսկոյն կատաղութեան իմաց կուտայ, որ կը կանչէ քահանան, քանի որ նախ բանալին իրեն քով էր և թէ եկեղեցոյ բակին մէջ ինքը միայն կը բնակէ ընտանեօք: Կը հարցուի իրեն թէ ո՞վ զոգոցաւ. միշտ «չեմ գիտեր» կը պատասխանէ. վերջագէս կը բանաստիւրուի Չ ժամի չա-

անսնելով որ մեր Հիւրմիտեան քա-
հանան խնդիրը իր վրայ միայն պի-
տի ծանրանայ կը խոստովանի թէ
զոգրերը նոր թաղ. եղած են և և ապա
թաղ. կը ձերբակալուին որոնք քանի
մը ժամեր բանտարկուիլէն վերջը կը
խոստովանին քրոզութիւնը իրաց
խոստովանութեան համաձայն կը
կանչուի Պաղճեան վարդապետը և
ծանրապէս կը յանդիմանուի իրեն
խառնակիչ եւ ազգավնաս գործերուն
նկատմամբ: Ընթերցող ուշադրու-
թիւն ըրէք մեր հոգեւոր պետն է
Ազգեւր հովիւն է որ կը յանդիման-
ուի, ալ ի՞նչ կը յուսանք այս կար-
գի սեւազգեստ տարագործներէն:
Պաղճեան ուր որ դնաց խառնեց ու
երկպառակութեան սերմեր դանկ
, ահա Սօֆիան եկեղեցի ու վարժարան
փակ են: հոս երեք ամիսէ ի վեր
նա այնքալ ան աշխարհ ազգային
ները խորհրդով այս սեւակ կզերնե-
րէ ոչ եկեղեցի կերթան եւ ոչ ալ ա-
նոնց յարգ ու պատիւ կուտան: կը
լսենք թէ Պաղճեան առ ՚ի յամօթոյ
ձիւրպէ պիտի մեկնի: վա՛յ եկաւ
ձիւրպէցոց գլխուն: կարծես Ազգ-
պատրիարքարանը զրկած է Պուլկա-
րիոյ հայութեան գլխուն փորձանքի
համար, զի ուր որ պահած է միայն խա-
ղաղ ժողովուրդին մէջ կրակ ձգած է
իրեն ընտրած նշանաբանին համա-
ձայն «Նուր եկի արկանել յերկիր»:
Թղթակից

Նոյեմբ. 20 թ. բազարճըդ
Յ. Գ.

Հոգաբարձութիւնը թաղ. խորհրդը
արդարութեան ասենին յանձնեց-
տաննանք ի՞նչ ազուեսական խորա-
մանկութեամբ իրենք զիրենք արդա-
րացուներու ճիշդ պիտի թափեն եւ
մինչեւ ե՞րբ դպրոցը բացուելուն ար-
գելք ըլլան:

Անտոն Յ. Ծանրիկեան

ՈՒԼՍՈՐԷԻ ԵՌԱՍՏՂԵՆ

—(0)—

Շարաթ 40 նոյեմբեր 367 թիւ
Շարժումի մէջ պատահաբար կարդացի
Սիլիստրէէն գրուած յօդուած մը
*** ստորագրութեամբ:

Պ. յօգուածագիրը, իր աչք գրու-
թիւնով կաշխատի անուանարկի տա-
րիներէ ի վեր իր անձնուէր գործու-
նէութեամբ ու ողջմտութեամբ Պուլ-
կարիոյ և Ռուսմանիոյ հայերուն ծա-
նօթ Տէր Տաճատ Ս. Դերձակեանը:

Մեր մէջ ժամանակէ մը ի վեր երե-
ւան եկած են կարգ մը գրչակներ,
որոնք որ և է անձնական ասելու-
թենէ մղուած, կամ իրենց անհատա-
կան շահերէ թելադրուած, կուզեն
անուանարկել մուր քան այնպիսի
անձնաւորութիւններու վրայ, որոնց
միակ. գործն է եղած ընդհանուրի
շահերը պաշտպանել:

Այս սխուր երեւոյթը ի նկատի ու-
նենալով, կը փութամ հակիրճ պա-
տասխանով մը ցոյց տալ ժողովրդ-
եան թէ՛ ո՞վ է Տէր Տաճատ քահանան
և որ մարդուկն է Սիլիստրէի Եոսա-
տղի պաշտպանած Տէր Աւետիք Փա-
փազեանը, որպէս զի ժողովուրդը
ճանչնայ իր բարեկամները:

Տէր Տաճատ առաջին անգամ Ռու-
սմանիա բերուած է երաժիշտ դասա-
տուի պաշտօնով, բարբառ սրտերը յու-
զող, հոգեւոր Սորէն եպիսկոպոս
Նար-Պէլի յանձնարարութեամբ: Հայր
Տաճատ իր աշխարհակառնութեան ժա-
մանակ Մարտիկոս թէրզեան անունով

ծանօթ է Ռուսմանիայի բոլոր ու-
րիւնակի ի անձնաւորութիւն մը: անի-
կայ երկար տարիներ իր արդիւնաւոր
պաշտօնավարութեամբ գնահատուած
է Թօքլանի, Կալայի, Գօնթանյայի,
Պապա-Տաղի և ուրիշ տեղերու ազ-
գայիններուն կողմէն:

Տէր Տաճատ անցեալին մէջ, իբր
լուրջ յեղափոխական մը ճանչցուած է
ժողովրդի կողմէն: Օգնելով, պա-
տարարելով հայ յեղափոխականները,
գաւառացի հայ կըրպայներու միտ-
քերը պատրաստելով, անոնց մէջ
խումբեր կազմակերպելով և շարունակ
անոնց եղբայրական յորդորներ տա-
լով ամենէն սիրուած ու յարգուած է:

Հայր Տաճատ թիւթիւնճիթի ստոր
մատնութեան ժամանակ, իր անձնա-
կան շահերը ոտքի տակ առնելով,
ինպատ յեղափոխականներու մեծ
գեր կատարած է, որոնց մասնաւոր-
նութիւնները ի հարկին փաստերով
կը ներկայացնենք ընթերցողներուն:
միայն թէ թէ առ այժմ այսքանը
կուզենք յայտնել Սիլիստրէի Եոսատը-
ղին, որ Տէր Տաճատ այնքան ալ ար-
ժան յեղափոխականներէն չէ, ինչ որ
կը յաւանիք ըսել Պ. Եոսատը:

Դարձեալ, հակառակ Եոսատղի
կարծիքին, Ռուսմանիայէն գործին
խիստ մօտէն ծանօթ անձնաւորու-
թիւններէ առնուած անգեկու թիւն-
ներու համաձայն, Տէր Տաճատը Ռու-
սման կառավարութեան առջեւ կաս-
կածելի ներկայացնելու ստոր գործը
կատարած է Կալացի Տէր Աւետիք
Փափազեանը, որը իբր «մատնիչ» ար-
գէն ծանօթ է շարերու:

Եթէ ցարդ Սիլիստրէի Եոսատը չէ
ճանչցած այդ մարդուկը, կը հրա-
ւիրենք զինքը իր յայտնի ստո-
րագրութեամբ ասպարէզ իլնէ, այն
ատեն այդ ստոր արարածի մատնու-
թիւնները ամբողջ պարագաներով տե-
ղեն ու տեղը պիտի հաղորդենք:

Տէր Տաճատ հացի խնդրի համար
քահանայ ձեռնադրուած չէ: անիկա
իր կրօնականի սրբմիտ տակ ազնիւ,
վեհանձն սիրտ մը կը կրէ, եթէ Տէր
Տաճատներ պատկանելի թիւ մը կազ-
մէին մեր մէջ, գուցէ հայ ժողովուրդը
ներկայ ցաւալի դրութեան մէջ չըը-
մուտ չըլլար:

Տէր Տաճատ այն կրօնաւորներէն չէ
որ ազգին անօգուտ բեռ մը լինի:
անիկայ ճանչցուած է Պուլկարիոյ և
Ռուսմանիոյ մէջ մի անձնուէր հովիւ:
Երբք արձաթի դերին չէ եղած Եո-
ստերու կողմէ պաշտուած մետաղը ա-
տելով կատէ: վերջապէս ողջամիտ ող-
ջամիտ և զայն ճանչցող դասակարգը
տիպար քահանայ մը կը ճանչնայ զայն:

Հայր Տաճատ իբր պարտաճանաչ
կրօնական, դեռ Սիլիստրէէն չի մեկ-
նած, Եոսատղին կանչել տուած չը-
մայիակ վարդապետը, որպէս զի իր
բացակայութեամբ ժողովուրդը հոգե-
ւոր մատակարարութենէն չը զրկուի:
Տէր Տաճատ վարդապետի Սիլիստրէ
հասնելէն յետոյ մեկնած է Կալաց,
բայց իր դէմ լարուած սոսկալի դա-
ւադրութեան մը գոհուելով՝ չէ յաջո-
ղած: Երբ վերադարձած է Սիլիստրէ
ժողովուրդը ճանչնալով իր արժանիքը
չէ ուզած անկէ բաժնուիլ: Տէր Տա-
ճատը կեանքին մէջ թմոզ չէ եղած և
ոչ ալ կը բժնի:

Որքան հեռուէն ու մօտէն ճանչ-
ցած եմ Սիլիստրէցիները, Պ. Եոսա-
տղի կարծածին չափ միամիտ չեն իր-
մէն շատ աւելի անկեղծ խորհող անձ:
Նաւորութիւններ կը գտնուին հոն:
Կարծի կալացի Արթուրուպոյսեցի
Տէր Աւետիք Փափազեանին, (պապ-

գային թողով եպիսկոպոսի, Աթէնքի
և Ռուսմանիոյ մէջ անցուցած լիտի
կեանքի մանրամասնութիւնները) սա-
չափ միայն կրնամ ըսել թէ ամեն ա-
նոնք որ 1890ի Գուսմարուի ցոյցէն
յետոյ իբր քաղաքական յանցաւոր
Ռուսմանիա փախած են, քաջ գէտեն
Տէր Աւետիքի ինչ ցած հոգի, արկա-
միտ արարած լինելը, և այս մասին
ինչպէս բոնք աւելի երկար և փաս-
տերով պիտի խօսինք եթէ Պ. Եոսատը
վեհանձնութիւն ունենայ իր «խակ-
կան» ստորագրութեամբ հապարակ
եղելու:

Ինչպէս կերեւի Պ. Եոսատը հմայ-
ուած է Տէր Աւետիքի ոսկեզոց օրա-
ցոյցէն, բայց սիրելի ասուպ, Տէր
Աւետիքի հրատարակութիւնները ան-
զօր են զինք զուրս հանել այն ցեխէն
որ մինչեւ կոկորդը թաթախուած է:

Անշուշտ Պ. Եոսատը երբ կը պաշա-
պանէ Տէր Աւետիք Փափազեանը, կը
ճանչնայ նաեւ մէկ ուրիշ գործակիցը
յայտնի մատնիչ, նոյնպէս հեղինա-
կութիւններ ունեցող Մ. Թիւթիւն-
ճիթը: կը զարմանա՞ք թէ ինչո՞ւ Պ.
Եոսատը Տէր Աւետիքը ժողովուրդեան
ճանչնելու համար չի յիշեր անոր
թիւթիւնճիթի հետ ունեցած գոր-
ծակցութիւնները, ինչ որ է, երեւի
առիթ կուենանք այդ հարցերու մա-
սին խօսիլ, եթէ կը կրկնենք, իբրեւ
պատուաւոր մարդ իր ստորագրու-
թեամբ հրապարակ իլնէ:

Լաւ է երբէք չը գրել
Քան լաւ վատարանի:
Պ. Եոսատը առ այժմ այսքան ցը-
տեսութիւն:

Հ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
Եոսմա 2 դեկտ.

ՆԵՐՊԱՏՆԵԱՑ ՀԱՆՈՒՆԵԿՆԻ
Ֆիլիպպի Ալիսոս. Մասնախմբին
1901 Յոյլիս 8 հեւ միլիցիա Նոյ. 25 1901

ՄՈՒՏԲ	
Գանձապետին քով սյատրաստ	գրում 115 80
Շարաթական գան-	
ճանակէն	330 071/2
Եկեղեցւոյ գաւթի	
գանձանակէն	6 30
Ա. Գ. Թօքաթլեանէ	
նուէր	8 20
Բարեւէր ազգայինէ մը նուէր	
2 լէվ ուրիշէ մը 50 սնդ	2 50
Խումբ մը երիտասարդներէ	
նուէր	8 15
Սարիմ Բէշիշեանէ	
գանձուած	1 50
Տ. Ռոլհանէն Աբրա-	
համանէ նուէր	15 —
Փոխառութիւն	97 —
	584 521/2

Եւ Ք	
Շարաթական նպաստ	281 25
Բացառիկ նպատաներ և հի-	
անդներու կառ. իր գրամ 9 65	
Պանդուխտ մշեցիի մը ճամբու	
ծախք	4 —
" " " " " " " "	8 50
" վանեցիի " " " "	12 05

Գիրքճի Գիրգոր ալսյի կնոջ	
և աղջ. ճամբու ծախք	30 —
Պանդուխտ մշեցիի մը նընչեց-	
ւային ծախք	2 40
Ինգորէից համար Ա. Թօքաթ-	
լեանի վճարուած	28 70
Տօքթ. Օրմանեանի ձեռքով	
կատրակեան հիւանդանոցը վը-	
ճարուած	26 —
Գ. Սաղաթիլեանի	
համար " " " "	8 —
Գանձանակը պտրացը-	
նոցին	65 87 1/2
Իրատեղանի մը համար եւ	
համալէք վճարուած	6 10
Փայտանոցին կղպանք և	
կընքամոմ	70
Չմեռուան համար գնուած	
փայտերու վճարուած	100 80
Պատրաստ գրամ	50
	585 521/2

Նույնպէս զգեկա.
Կարմիր գալանի հրամանով
Ատրիանապոլսոյ մէջ կայապան
բարձրացած և կուր մէջ ինկած
նահատակների հոգւոյն համար
Տեղւոյս Ս. Աստուածածնայ
եկեղեցւոյն մէջ կիրակի 9 դեկ.
հոգեհանգստեան պաշտօն կա-
տարուեցաւ ի ներկայութեան
խուռն բաղմոթեան մը. ներկայ
էր Մակեդոնու — Օարինեան քո-
միթէի վարչ. անդամք. յետ
հոգեհանգստեան եկեղեցւոյն բա-
կին մէջ երկարօրէն խօսեց Պ. Ա.
Տ. պարզաբանելով թուրք կառա-
վարութեան խաղցած անարգ
դերը, աւելի ծանրացաւ Պետրոս
Սերբմճեանի (պուլկարացիի) եւ
ընկերների կեանքին վրայ.
յետոյ Պ. Գ. Ռ. աղբու բանա-
խօսութիւն մը ըրաւ Պետրոյին
նուիրուած:

ՎԱՂԱՐՃ
ՌՈՒՍՃՈՒԿ Պ. ԹՈՐԳՈՄԻՆ ԵՒ ԳԵ-
ԿԵՐՆԵՐՈՒՆ

Գրիգոր Յակոբեանի մասին
ձեր մեզի հաղորդածները ստու-
գեցինք, և համոզուեցանք ա-
նոնց ճշմարտութեանը, հիմա ա-
ռիթը չենք տեսներ և շարժեք
այդպիսի անկարեւոր տիպարնե-
րու համար հարց բարձրացնել:
Մուրատ Սոկրատ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ազգիանուպոլսոյ հեղուներուն
համար Սօֆիայի մէջ հոգեհան-
գիտ կատարուած օրը շատ մը
պուլկարներ հեռագիր ուղղած
են ԳՐՈՇԱԿԻ խմբագրութեանը
որ պատասխանած է հետեւեալը:
«Հայոց տանջանքներու մէջ

պուրկար ընկերներու համակրու-
թիւնը մեզի համար մեծ մխի-
թարութիւն մըն է, իսկ Ագորիա-
նու պոլսոյ մէջ կախուողներուն
արիւնը նոր կապ պիտի ըլլայ
մեր միասին կուելուն համար:

Կեցցէ ազատ Մակեդոնիան:
— Նոյեմբ. 30ին Կարնայ մէջ պա-
տահած երկրաշարժի նոր ցըն-
ցումները այնքան ալ զօրաւոր
չեն եղած, միայն բնակիչներ
սարսափահար եղած եւ տներէն
դուրս նետուեր են: Ծառերը
մերձակայ քաղաքները կը գազ-
թեն, Եկեղեցիին և Կալոցնիսը
գոց են, միայն Սազասարեան
վարժարարին մէջ գտնուող
թիւնները սկսուած են:

ՉեհոՅՅ

Այն ազգայինները որոնք փա-
փաք ունին մասնակցիլ Կարնի
երկրաշարժէն զնստած մեր
եղբայրներուն, կրնան իրենց
լուծան յանձնել Կարնեցի վա-
ճառական Տիար Գրիգոր Սահաթ-
ճեանի:

Տիար Սահաթճեան շատերը չը
ճանչնալու պատճառով չէ կրցած
ամէնուն դիմել: Կարնոյ առաջ-
նորդարանէն օգնութիւն խնդրող
նամակ արդէն Տիար Սահաթ-
ճեանի վրկուած էր. նուրապան-
ներու ցանկը թերթերուն մէջ
պիտի հրատարակուի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Պէյրութի իշխանութիւնները
չեն ուզած քանի մը հին թրքա-
հայտակներու վերջը ընդունած
Ամերիկա հայտակութիւնը ճանչ-
նալ, անոնց առաջարկած են կամ
նորէն թրքահայտակ ըլլալ կամ
թէ երկրէն հեռանալ:

Պոլսոյ տմերիկեան դեսպանի
փոխանարդը բողոքած է Բ. Գրան:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Սօփիան մէջ Ագորիանու պոլսոյ
մէջ կախուած յեղափոխականնե-
րու յիշատակին կատարուած հն-
գեհանգրտեան պաշտօնին օրը ա-
հագին բազմութիւն մը Լեվոսթի
արձանի քովէն անցեր է զէպի
թուրք դեսպանատան կողմը և
հոն հակակրական ցոյցեր ըրեր
է:

Վերջը արտաքին և ներքին
գործոց նախարարները զայցեր
են ներողութիւն խնդրեր են
թուրք դեսպանէն:

«Մէմօրեալ րաիպլօմաթիք»
թերթը կը հաղորդէ որ Անգլի-
ացոց թագաւորը, Աւստրիոյ և
Գերմանիոյ կայսերները միասին

տեսակցութիւն մը պիտի ունե-
նան փետրուարին, որու միջոցին
պիտի խորհրդակցին Լոբոպոյ
մէջ խաղաղութիւնը անվրդով
պահպանելու մասին:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Բրէթօրիաէն կը հեռագրեն
թէ պօէրները ծանր պարտու-
թեան մը մատնած են անգլիա-
ցիները Պիկէնտէրլայնի մօտերը:
Անգլիացիներուն կորուստը շատ
է:

— Անգլիական թերթ մը կը
հաղորդէ որ Քրիստիանոս Կոմար-
մադիր է աւելի վիճումներով
հաշտութեան բանակցութեան
սկսիլ Անգլիոյ հետ:

Պ Ա Ր Ս Յ Ա Ս Ս Ա Ն

Բարիչի մէջ կիմանան թէ
Պարսկաստանը սրըշած է Բէնտէր
Ապասի նաւահանգիստը Ռուսիոյ
թողուլ:

Յ Ա Յ Ս Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն

Փիլիպէի «Հայկական երգեցիկ
խումբը» աւ շրջանին մէջ վերս-
կած ըլլալով արդէն իր պա-
րսպունքները, ձեռնարկած է
նաեւ պարբերաբար հրատարա-
կելու եւրոպական ձայնագրու-
թեամբ հայկական հին եւ նոր
քառաձայն երգեր, մաքուր թղ-
թի վրայ, յստակ վիմագիր:

Այս առթիւ երգեցիկ խումբի
վարչութիւնը ներկայիս կը յայտ
նէ Պուլկարիոյ և արտասահմանի
երաժշտասէր հայ երիտասարդու-
թեան, որ եթէ առ երգերէն
փափագողներ կան, հաճին դի-
մել վարը նշանակուած հասցէին՝
վճարելով «մէկ թուղթին» հա-
մար 20 սանթիմ. փոստի ծախսը
մեր վրայ: Կան երգեր որոնք
մէկէ աւելի թուղթերէ կը բաղ-
կանան:

Արտասահմանի համար 35 սնթ.
Փիլիպէ վարչ. «հայկ. երգե-
ցիկ խումբին»:

Հասցէ՝ Agop Sivadjian Philippople

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ ՄԻՈՒԹԻՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան
նամակ ուղարկելու եւ առհասարակ
ամէն տեսակ դիմում ընելու համար
պէտք է դիմել հետեւեալ հասցէով
Իւնիօն Տէրօյիսիան Արմ.
Լէօրոս րիս քը Լէֆօլ քը Շիմի 2

Սուխա Ժընէվ
Կարգողիք Յանձնաժողով

ԳՈՐԾԱՐԱՆ
— 0 —
Լաթ ներկելու և քիմիա-
պէս մաքրելու:
Վ. Ս Թ Օ Յ Ի Լ Օ Յ
ԵՒ
ԻՎ. Մ. ԻՕԲՕՅ
ՐՈՒՍՅՈՒՔ
Սոյն գործարանի մասնաճիւղը
որուն կառավարիչն է Բէթթ
ԿԼՈՒՇԻՔՕՅ «Իզվէստիկ» խմ-
բագիրը, քաղաքային պարտե-
զին դիմացը:
Կը ներկէ կանանց և մանկա-
կապ զգեստներ, մետաքսէ,
բրդէ և բամպակէ գործուած ք-
ներ, նոյնպէս վաճառականական
ապրանքներ ու մանուածքներ:
Ներկը չի թափեր, միայն
ներկելու տալիք նիւթերը մա-
շած չի պիտի ըլլան:
Գիները չափաւոր են:

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

— (II) —
ՎԵՍԵԼՕ

Վաղը կիրակէ ցորեկէ վերջ
ժամ 3ին ազգային փառաւոր ներ-
կայացումն հայերէն լեզուաւ:

ԱՐՇԱԿ Բ.
Ողբերգութիւն 5 արար
հեղինակութիւն
բարեյիշատակ Պ. Դուրեանի

Ժիծաղաշարժ զուեշտ մը
Դեկտ 18ին երեքշաբթի գի-
շեր մեծաւ պատրաստութեամբ
պիտի ներկայացուի:

ՕԹԵԼԼՕ
Ողբերգութիւն 5 արար
Հեղ. Շէքսպերի
Սոյն ներակայացման օթեաք
և թուաւոր նստարանի տոմսերը
հաեգիսականաց գիւրութեան հա-
մար այսօրուընէ կը ծախուի
թատրոնի կիշին:

ԻՄԲԱԿՐՈՒԹԻՒՆ. «ՇԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ
այցեառմս, հասցէտոմս, նամա-
կագլուխ, հարանեկան հրաւի-
րագիր, մահալղ:

Գիները յոյժ դիւրամատչելի:
Ուրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշդու-
թեամբ և փութով կը կատար-
ուին:

ՅԱՆՉԵՍԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՆԵՒԻՂ

ՅԱՅՍԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Հայկերեւոյցում հիմնել է մի գրա-
դարան, որ նպատակ է գրել ծանօթա-
ցընել արաստահմանի հայ ուսանո-
ղութեան եւ ընդհանրապէս հետաքր-
քուող անձանց հայոց ներկայ կեան-
քին վերաբերեալ հայերէն եւ օտար
լեզուով լոյս տեսած գրքերի հետ:
Գրադարանը ունի յիշեալ նպատակով
հրատարակած գրքերի մի համեստ թիւ
որի համար յայտնում ենք նուիրա-
տաւ անձանց մեր խորին շնորհակա-
լութիւնը եւ խնդրում ենք այն
անձանց հատատութիւններին,
որոնք կամենում են գրքերով եւ
գլխաւորութիւններով օգնել գրա-
դարանին, բարեհաճին ուղարկել
հետեւեալ հասցէով:
A. Iohannessian Heidelberg Kaiser 31
№ 5

ԱՉԻ
— 0 —
Բաղէշի կուսակալութեան պատ-
կանեալ Սուրբազմի գիւղէն Պէկօ
Ասատուրկանի, հաստատակաղմ
չէկ պէխով ու յօնքերով, 6 ա-
միսէն ի վեր ուր լինելն անյայտ
է զայն եթէ ճանաչողներ կան
յանուն մարդասիրութեան թող
էր այրի տիկին մայրը մխիթա-
րել հաճին, անոր ուր գտնուիլը
խմբագրութեանս հաղորդելով:

ԱՉԻ
— 0 —
Վառնայի ազգային մանկա-
պարտէսին համար կարող ման-
կապարտէղուհի մը ուղուի:
Գոհացուցիչ ամսաթուղակ. գիմել
տնձամբ կամ նամակաւ անգային
վարժարանաց հոգաբարձութեան:

ԿԱՂԱՆԴՉԻԲ
Նոր լոյս տեսաւ այս գրկոյքը
արձակ և ոտանաւոր:
Հեղինակը զայն գրչի կրօսանք
անուանած է, և իրաւ ալ գրչի
կրօսանք է:
Գինն է 40 սնթ. կը ծախուի
Վառնայի մէջ Զարպհանէլեան
գրատունը:

Գ Ո Ւ Թ Ա Ն
Հանդես անկախ, հոյազորժակակ
գիտական եւ արուեստագիտական
Հիմնադիր անօրէն
Գարեգին Գ. Մեծսուրեան
Հրատարակուած է Գրք թիւը,
չահեկան բովանդակութեամբ:
Տարեկան բաժնեկիւն 12 ֆր. դի-
մել հիմնադրին, 23 rue de la Collegiale

Отговорникъ:
Мурадъ-Ераносянъ
Печ. Взаимность — Варна